ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ծրագրավորման ծառայությունների միջոցների ձեռքբերման նպատակով ձևավորված «*ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-17/1*» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.07.2017թ. ժամը 11-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Լ. Հովհաննիսյանը, Վ. Պետրոսյանը, Վ.Գսպոյանը, Է.Արշակյանը, և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«*ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-17/1*» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:
Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ (ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1)**
2. **«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան,փ.Շ. 5/9,74)**
3. **«ՖՎ&Գ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Ազատության 24)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ** կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:
3.2 Մնացած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում/հայտում առկա փաստաթղթերում/ կան թերություններ, մասնավորապես՝
3.2.1 **«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ** կողմից ներկայացված **Հավելված 8** հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագրում լրացվել է.
Ա/ Վճարման պահանջագրի համարը (լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս) ,
Բ/ Ներկայացման ամսաթիվը (լրացվում է վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը) ,
Գ/ Բացակայում է 18.ա. կետով նախատեսված վճարողի էլեկտրոնային թվային ստորագրությունը:
3.3 **«ՖՎ&Գ» ՍՊԸ** կողմից ներկայացված Հավելված 8 հանդիսացող տուժանքի մասին համաձայնագրի մաս կազմող վճարման պահանջագրում լրացվել է ներկայացման ամսաթիվը և բացակայում է արժույթի կոդը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/				
		Քանակ	Նախահաշվային գին/ՀՀ դրամ/	«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ*	«ՖՎ&Գ» ՍՊԸ	«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ*
1	Ծրագրավորման ծառայություններ	1	600000	490000	500000	2080000

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը արձանագրեց, որ

«Մեգապոլիս Լաբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մերժել **«Բեսթ Սոֆթ» ՓԲԸ և «ՖՎ&Գ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով** ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:

2. Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու համար հաջորդ նիստը հրավիրել **2017թ. հուլիսի 14-ին, ժամը 11:00-ին,** ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, 621 սենյակում:

Քարտուղարին՝

Մեկ աշխատանքային օրում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Լ. Հովհաննիսյան

_____ Վ. Պետրոսյան

_____ Է.Արշակյան

_____ Վ.Գսպոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան